

## ԼՍԵԼՈՒ ՄԵՂՔԸ

(Խավիեր Մարիասի  
«Այնքան սպիտակ սիրտը» վեպը)

«Չեմ ցանկացել իմանալ, սակայն իմացել եմ, որ աղջիկներից մեկը, որն արդեն փոքր չէր և նոր էր վերադարձել ամուսնական ճանապարհորդությունից, մտավ լուգասենյակ, կանգնեց հայելու առաջ, հանեց բլուզը, արձակեց կրծկալը և հարազատ հորը պատկանող ատրճանակի ծայրն ուղղեց սրտին...»: Այսպես է սկսվում «Այնքան սպիտակ սիրտը» վեպը, որի գլխավոր հերոսը Խուան Ռանսը, նախընտրում է չիմանալ, քանզի գիտակցում է, թե որքան վտանգավոր է լսելը... ականջները թարթիչներ չունեն, և ուրեմն՝ ականջով լսածը չես մոռանա: Երբեմն ավելի լավ է չիմանալ: Լսելը վտանգավոր է: Իմանալը ճանապարհ է, որ չունի վերադարձ, անհնար է ետ տալ ժամանակի անիվը և մոռացության տալ գաղտնիքը, որ լսել ես: Կան խոստովանություններ, որոնք մինչև հոգու խորքը խոցում են, դրանք լսելուց հետո այլևս անհնար է ապրել առաջվա պես: Երբեմն լսածդ բառերն առավել իրական են, քան ապրածդ կյանքը, որովհետև կյանքը կախված է ոչ թե քո արարքներից, այլ իմացածից, ավելի ձիշտ՝ մարդկանցից, որոնք տեղյակ են արարքներիդ: Այն, ինչ պատմում են, և այն, ինչ թաքցնում են, կարող է որոշիչ լինել, որովհետև լռելը և խոսելը ապագային միջամտելու ձևեր են: Պատմելը տձևում, խեղաթյուրում է մեր իմացածը, որովհետև երբ պատմում ենք, արդեն պատմած իրողությունը թվում է անիրական, մի տեսակ կասկածելի, նույնիսկ երբ ճշմարտությունն ենք

պատմում: Միակ ճշմարտությունն այն է, որը չի բացահայտվում, չի փոխանցվում շուրթից շուրթ, ականջից ականջ, այն, որ չի թարգմանվում ոչ բառերի, ոչ պատկերների միջոցով, այլ մնում է անթափանց, չճշտված, ահա թե ինչու, երբ ուզում են՝ ոչինչ չպատահի, կան շատ են պատմում դրա մասին, կան պատմում են ամեն ինչ, որովհետև իսկական ճշմարտությունը միշտ ապրում է գաղտնիքի ձևով և մնում իբրև գաղտնիք:

Սրանք մտքեր, գաղափարներն են, որ մարմնավորվում են «Այնքան սպիտակ սիրտը» վեպի գլխավոր հերոսի մտապատկերում: Հեղինակը մտորում է խոսելու և լռելու, ճշմարտության և խաբեության, իշխելու, սեփական կյանքը կառավարելու անկարողության և ամուսնության շուրջ, այնպես, ինչպես գրում է վեպի սկզբում. «Չեմ ցանկացել իմանալ, սակայն իմացել եմ»: Բոլորիս պես՝ գլխավոր հերոսը նույնպես գիտի գաղտնիքներ, որոնց, ավաղ, կցանկանար անգիտակ մնալ: Կան բառեր, որոնք բարձրաձայնվելուն պես մեխվում են սրտիդ մեջ և անջնջելի բիծ թողնում *այնքան սպիտակ սիրտիդ* վրա:

Վեպը պատմում է գլխավոր հերոսը. ամուսնացած տղամարդ, որը պետք է ընտելանա «կարգավիճակի փոփոխությանը», որովհետև նոր է ամուսնացել, այնուամենայնիվ, «Այնքան սպիտակ սիրտը» վեպը միայն սիրային հարաբերությունների մասին չէ: Ստեղծագործության սկզբում գլխավոր հերոսի հետ վերադառնում ենք վաղեմի անցյալ՝ դեռևս նրա ծնունդից առաջ: Գլխավոր հերոսն իբրև հեղինակ պատմում է, որ Թերեզան՝ իր հոր առաջին կինը, որը նաև իր հարազատ մորաքույրն է, ինքնասպան է եղել, հետո միայն անդրադառնում է սեփական կյանքի պատմությանը:

Վեպի սյուժեն զարգանում է բազմաթիվ կերպարների մասնակցությամբ՝ Լուիսան, Ռանսը, Կուստարդոյը, Բերտան: Ռանսը՝ գլխավոր հերոսի հայրը, բավական հետաքրքիր կերպար է, էլեգանտ, կիրթ, բարձրաճաշակ

տղամարդ, որն իրականում հանցագործ է և իր ներսում երկու մեծ գաղտնիք է պահում: Մեկ այլ հետաքրքիր կերպար է Բերտան. միայնակ կին, որ անցյալում է թողել երկու անհաջող ամուսնություններ, այժմ ազատ է, ապրում է Նյու Յորքում և պատրաստ է ցանկացած հարաբերության: Գիլերմոն, Բիլը, Կուստարդոյը կանանց հետ հարաբերություններում ուժեղ և տիրական տղամարդկանց կարծրատիպեր են, որոնք առավել հաճախ նվաստացնում, ենթարկում են կանանց, որպեսզի իբրև տղամարդ իրենց կայացած և ուժեղ զգան: Բերտան և Միրիամը այն տեսակի կանանցից են, որոնք չեն կարող խուսափել նմանատիպ իրավիճակներից, քանի որ նրանց դուր է գալիս «խաղալ» այդպիսի տիրոջներում: Այս կանանց կողքին Մարիասը ներկայացնում է Լուիսային. լիովին տարբեր մի կնոջ, որը ամուսնու ընկերն է և միաժամանակ «հանցակիցը», գիտի ինչպես արժանանալ սիրո և հարգանքի, ինչպես բացահայտել մյուսների գաղտնիքները, որովհետև *ուզում է իմանալ*, նույնիսկ եթե այդ գաղտնիքները մահու չափ վտանգավոր են: Խուանը Լուիսայի հետ ծանոթանում է աշխատանքային մթնոլորտում, երբ միասին թարգմանում են քաղաքական երկու խոշոր գործիչների, որոնց կերպարների տակ, ըստ գրականագետների, Մարիասը նկատի ունի Մարգարետ Թետչերին և Ֆելիպե Գոնսալեսին, որոնց գրույցն իրականություն է դառնում բառացիորեն Խուանի՝ թարգմանչի միջոցով, իսկ Լուիսան չի թարգմանում, միայն հետևում է թարգմանության ընթացքին: Զրույցի ընթացքում առաջ է քաշվում «բոլորը բոլորին ստիպում են» արտահայտությունը, որի հետ չի կարելի չհամաձայնել, օրինակ՝ Խուանն ուզո՞ւմ էր իմանալ այն, ինչ իմացավ. մեկ այլ ձևով Լուիսան ստիպում է Ռանսին պատմել իր կյանքի մութ պատմությունը, Ռանսը ստիպում է Լուիսային իրեն մինչև վերջ լսել: Խուանը ստիպում է ինքն իրեն չփակել դուռը և լսել հոր ու

կնոջ խոսակցությունը՝ դրանով իսկ դառնալով նրանց լուռ հանցակիցը:

«Այնքան սպիտակ սիրտը» վեպի մի փոքրիկ հատված նվիրված է Շեքսպիրի «Մակբեթի» սպանության տեսարանի նկարագրությանը, որտեղ Լեդի Մակբեթն ասում է ամուսնուն. «Իմ ձեռքերը քո գույնն ունեն, բայց ամաչում եմ, որ կրծքիս տակ այսքան սպիտակ սիրտ եմ կրում».– արտահայտություն, որը դառնում է «Այնքան սպիտակ սիրտը» վեպի գլխավոր գաղափարն ու վերնագիրը, որի մեկնաբանությունները բավական շատ և տարբեր են: Ոմանք սպիտակ սիրտը հեզնանքով վերագրում են մեկին, ով անձամբ չի կատարել հանցագործությունը, այսինքն՝ իբրև անմեղության, մյուսները՝ իբրև վախկոտության խորհրդանիշ: Լեդի Մակբեթը չի սպանել, բայց կոծկել է հանցանքը, չի ցանկացել իմանալ, սակայն իմացել է, ոչ միայն լռել է, այլև փորձել է ամուսնու գործած հանցանքը վերագրել ուրիշներին՝ դրանով իսկ դառնալով մարդասպան ամուսնու հանցակիցը. ահա թե ինչով է վտանգավոր լսելը:

«Մակբեթում» Մարիասը մեջբերում է բոլորիս հայտնի շեքսպիրյան մեկ այլ արտահայտություն, որը հնչում է Լեդի Մակբեթի շուրթերից. «Պետք չէ այդպես հիվանդագին մտածել երևույթների մասին», որով խորհուրդ է տալիս ամուսնուն դադարել մտածել տեղի ունեցածի մասին, այլապես կխելագարվի: Չմտածելու լավագույն դեղամիջոցը մոռացումն է, «քաղցր թոյնը», որը թոյլ է տալիս հանգիստ ապրել, առանց խղճի խայթի և մեղքի զգացումի: Մոռացումը հաշվի չի առնում ո՛չ զոհերին, ո՛չ պարտվողներին, այնպես որ մոռանալը և հանցանքը թաքցնելն ամենահեշտ, բայց և ամենավախկոտ ձանապարհն է: Եվ ուրեմն, հարց է ծագում, ո՞վ է գրում պատմությունը. հերոսները, որոնք մտածում են սեփական փառքի մասին,

պարտավորները, թե՛ հաղթողները: Սովորաբար գրողները հաղթողներն են, քանի որ բավական քաջություն ունեն այդ անելու համար, բայց, այնուամենայնիվ, հենց նրանք են, որ շարժում են ժամանակի անիվը, որպեսզի այլևս չհիշեն, և թող ոչ ոք ոչինչ չհիշի. ահա սրանում է քաղցր թույնի, քաղցր մոռացության իմաստը: Միգել Էռնանդեսն ասում է. «Բառը հոգի է», Մարիամն ավելացնում է. «Եվ ուրեմն, որքա՞ն տխուր են մեր հոգիները»:

Ստացվում է՝ երկու գրքերն էլ մեղքի, դավաճանության, հանցանքի, լուռության, պատմելու և իմանալու, լսելու և չասելու ու դրանց հնարավոր հետևանքների մասին են: Երկուսն էլ անդրադառնում են մարդու բնույթի, նրա կեցության համընդհանուր թեմաներին՝ հավակնությանն ու խենթ սիրուն: Երկու գրքերում էլ կան մեղավորներ, մարդիկ, որոնք ոչինչ չեն արել. նրանց միակ մեղքը լսելն է, իմանալը, որովհետև իմանալը և լռելը նրանց դարձնում է հանցակից:

«Այնքան սպիտակ սիրտը» վեպը ներկայացվում է գլխավոր հերոսի շուրթերից, առաջին դեմքով: Դրանով հեղինակը փորձում է միանգամից ազդել ընթերցողի վրա՝ այդպիսով բացառելով իր՝ իբրև հեղինակի միջամտությունը հեղինակ-կերպար-ընթերցող հարաբերակցության մեջ: Նա հիմնականում քաջատեղյակ է այն փաստերին և իրողություններին, որոնց մասին վկայում են ընտանիքի անդամները կամ ընդհանուր ընկերները: Ի սկզբանե հեղինակը կամ գլխավոր հերոսը կամ պարզապես վեպը պատմողը որոշակի կասկած է առաջ բերում ընթերցողի մոտ՝ վերջինիս ստիպելով ունենալ կանխազգացումն այն բանի, որ ինչ-որ պահի տեղի է ունենալու ողբերգական մի բան՝ դրան տալով «դժբախտության կանխազգացում» անվանումը:

Եթե անդրադառնալու լինենք «Այնքան սպիտակ սիրտը» ստեղծագործության կառուցվածքային և գաղափարական

առանձնահատկություններին, ապա պետք է մեջբերենք հետևյալները.

- *Հեղինակի և գլխավոր հերոսի անձերի նույնականացում:* Առհասարակ Խավիեր Մարիասի բոլոր ստեղծագործությունները ներկայացվում են առաջին դեմքով. նույն այս վեպում, ինչպես արդեն նշվեց, պատմողը գլխավոր հերոսն է, երեսունն անց տղամարդ, օտար լեզուների հրաշալի գիտակ, որն աշխատում է իբրև թարգմանիչ: Ակնհայտ է, որ Մարիամն անձամբ հրաշալի տիրապետում է անգլերենին և նրան դուր է գալիս վեպում ի ցույց դնել անգլերենի իր գիտելիքները, և եթե նկատի ունենանք բազում այն մրցանակները, որոնց գրողն արժանացել է Օքսֆորդի համալսարանի կողմից լավագույն թարգմանությունների համար, ապա դժվար չի լինի նույնացնել նրան գլխավոր հերոսի հետ:

- *Մարիասի բոլոր հերոսներն ունեն այնպիսի մասնագիտություններ, որոնք պահանջում են առավելագույն ուշադրություն, լավ լսողություն, ասվածի և լսածի ստույգ մեկնաբանություն, ինչպես, օրինակ՝ ժեստեր, հայացքներ, շարժումներ և խոսքեր:* Բոլոր այս հերոսներին միավորում են ամեն ինչ հասկանալու անկեղծ մղումն ու ձգտումը: Մարիասի հերոսներն ինքնադրսևորվում են միջազգային հարթակներում, դուրս են գալիս Իսպանիայի սահմաններից: Նրանք ունեն բավական ժամանակ և գումար, մշտապես խորասուզված են տարաբնույթ խոսակցությունների, իրադարձությունների, ասված և չասված խոսքերի շերտերի ուսումնասիրություններում, որոնցում պարտադիր փնտրում են պատճառահետևանքային կապեր, որոնք իրենց հերթին դառնում են իրողությունները պարզաբանելու, ամենատարբեր վարկածները հաստատելու լավագույն, բայց և միակ հնարավոր միջոցներ: Մեկ այլ ձևով՝ Մարիասի հերոսները լուռ դիտորդներ են, որոնց ուղղորդում է իրերի և երևույթների լուսաբանման անսահման

հետաքրքրասիրությունը: Նրանց դուր է գալիս խորամուխ լինել մյուսների ներաշխարհի մեջ՝ մեծ կարևորություն տալով բառերին, որոնք արտաբերվում են, իսկ առավել հաճախ մնում չարտասանված, ահա թե ինչու բոլոր այդ հերոսներն աչքի են ընկնում ամեն ինչ կասկածի տակ դնելու, խորը տրամաբանական և զգայական վերլուծության ենթարկելու հակումով:

- *Մարիասի վեպերի կառուցվածքը բավական բարդ է*, դրանք առավել հաճախ հագեցած են մարդկային վարքագծին վերաբերող փիլիսոփայական բարդ վերլուծություններով և մտահանգումներով: Հաճախ այնպիսի տպավորություն կարող է ստեղծվել, որ հեղինակը կորցնում է այուժետային կոնկրետ գիծը և տարածվում այլ ենթաշերտերում, սակայն հարկ է նշել՝ եթե Մարիասը շեղվում է բուն թեմայից, ապա դրա պատճառը պետք է փնտրել այլ տեղում, օրինակ՝ վեպի հանգուցալուծման այս կամ այն ձևի մեջ, քանի որ Մարիասի մտահանգումներում պատահական ոչինչ չկա: Իսպանացի գրողի վեպերում թագավորում է միտքը, մտածողությունը, նրա հերոսները մտածող ինտելեկտուալ մարդիկ են:

- *Մարիասի արձակն ունի հարուստ և մտորումների տրամադրող լեզու*: Գրողը փնտրում է ճշգրիտ բառը, չնայած նախադասությունների «ճոխությանը»՝ երկարաշունչ ֆրազներ, օտար լեզուներով մեջբերումներ, մեծ թվով օտարաբանություններ, կրկնություններ, ածականների գերօգտագործում, կողմնակի մանրամասներ, փակագծերում տրվող պարզաբանումներ, այս ամենի հետ մեկտեղ ընթերցողը չի ձանձրանում, չի կորցնում տեքստի այսպես կոչված՝ մեսիջը, որովհետև Մարիասը գիտի՝ ինչպես կառուցել վեպը: Չնայած, մյուս կողմից, պետք է փաստել, որ Մարիասի վեպերն ամենևին էլ դյուրամարս չեն, դրանց ձիշտ ընկալման, առավել ևս՝ ընթերցածդ

հստակ ձևակերպելու համար առնվազն վերլուծական միտք պետք է ունենաս:

Մարիասը գրականությունը մեկնաբանում է իբրև կյանքի, ապրելու օրինակ կամ ուսուցում գրականության միջոցով. այս մասին նա գրում է. «Այն ամենը, ինչ տեղի է ունենում դրանցում, այսինքն՝ վեպերում, նույնն է, ինչ մեր կյանքը: Ամենահետաքրքիրը, սակայն, բոլոր այն հնարավորություններն ու գաղափարներն են, որոնք համակում են մեզ և տանում իրենց ետևից: Թերևս հենց դրանով է բացատրվում այն մղումը, որով մենք ձգտում ենք կարդալ վեպեր և քրոնիկներ, դիտել ֆիլմեր, որովհետև դրանցում մեզնից յուրաքանչյուրի կյանքն է»:

Ժանրային տեսակետից ինչպե՞ս կարելի է սահմանել տվյալ ստեղծագործությունը, իբրև վեպ, հավանաբար այո, ինչպես իրավացիորեն նշում է Օրտեգա ի Գասետը. վեպը ազատ և բաց ժանր է, որը թույլ է տալիս գրել ամեն ինչի մասին: Ուրեմն ի՞նչ, գուցե դետեկտիվ վեպ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ի սկզբանե ստեղծագործությունն սկսվում և ավարտվում է սպանության մասին վարկածներով և բացահայտումներով: «Այնքան սպիտակ սիրտը» վեպը «հետազոտություն» է մարդկային բարդ հարաբերությունների մասին: Այլ կերպ ասած, սա տրասցենդենտալ վեպ է, մտածելու տեղիք տվող ստեղծագործություն, որը համեմված է տարբեր գործողություններով և խոր հոգեբանությամբ: «Այնքան սպիտակ սիրտը» վեպը գաղտնիքների, դրանց հնարավոր վտանգավորության, անումնության, սպանությունների, կասկածի, խոսելու և լռելու մասին է, սպիտակ սրտերի մասին, որոնք կամացկամաց ներկվում են՝ դառնալով այնպիսին, ինչպիսին որ երբեք չէին ցանկնա լինել:

*Ռուզաննա Պերրոսյան*